ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/52

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2018թ. թիվ 03/26-3/8418-18 գրությամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 08.05.2018թ. թիվ 1/18-2/23315-18 գրության հիման վրա, 10.05.2018թ. թիվ 03/26-3/8418-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էն գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էն գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Էն գրուպ» ՍՊԸ-ն 20.04.2018թ. մասնակցելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին ի սկզբանե պատրաստ է եղել կատարել ընթացակարգով սահմանված բոլոր գործառույթները: Սակայն երկրում արդեն իսկ մեծ թափ առած խաղաղ անհնազանդության ակցիաների հետևանքով, որոնք զուգորդվում էին դասադուլներով և գործադուլներով, փակված էին գրեթե բոլոր ճանապարհները (ընկերության աշխատակիցներից երեքը բնակվում են ք. Արմավիրում, իսկ մեկը ք. Եղվարդում), ֆիզիկապես հնարավոր չի եղել հասնել աշխատավայր (ք. Երևան, Քաջազնունի 1) և ժամանակին կատարել սահմանված գործառույթները:

Ընկերությունը հայտնել է, որ «Էն գրուպ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2015թ. հուլիսի 28-ին և իր հիմնական գործունեությունը իրականացնում է պետական գնումների միջոցով: 2017թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ պետական գնումների միջոցով կնքել և պատշաճ ձևով իրականացրել է ավելի քան 80 պայմանագիր:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նշված բոլոր փաստերը, ըմբռնումով մոտենալ այն հանգամանքին, որ Ընկերությունը հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում ուղարկել «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով ընթացակարգի որակավորման փաստաթղթերը և «Էն գրուպ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և հնարավորություն տալ ընկերությանը շարունակել իր գործունեությունը:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 17.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ ի հիմնավորումն 16.05.2018թ. տեղի ունեցած «Էն գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ կայացած նիստում Ընկերության կողմից ներկայացված այն փաստի, որ Ընկերության աշխատակիցները խաղաղ անհնազանդության ակցիաների արդյունքում ֆիզիկապես հնարավորություն չեն ունեցել հասնել աշխատավայր և իրականացնել աշխատանքային գործառույթները, Ընկերությունը տեղեկացնում է, որ ունի չորս

աշխատող տնօրեն՝ Աղասի Խառատյանը (ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20), Գոհար Գինոսյանը (ք, Արմավիր, Բաղրամյան փ., 10շ., բ.30), Ռոման Սաֆարյանը (Արմավիրի մարզ, գ. Խանջյան, 4-րդ փ., 1շ., 1բ) և Անի Սարգսյանը (ք. Եղվարդ, Ղազարյան փ. 1-ին նրբանցք, տուն 7): Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է ք. երևան Քաջազնունի 1 հասցեում:

«Էն գրուպ» ՍՊԸ-ի աշխատանքային պրոցեսը կազմակերպելու համար նախատեսված սարքավորումները, փաստաթղթերը և տեղեկատվական ամբողջ բազան (տնօրենի նույնականացման քարտ, նույնականացման քարտ կարդացող սարք, գործընկեր կազմակերպության կողմից տրամադրված ապրանքների ցանկ, որտեղ նշված է նաև ապրանքների տեխնիկական բնութագրերը և այլն) գտնվում է Ընկերության գործունեության հասցեում, ինչի արդյունքում առանց այդ սարքերի և տեղեկատվության հնարավոր չի եղել այլ տարածքից իրականացնել աշխատանքային գործընթացները և «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաթվածահար էր եղել Ընկերության աշխատանքային ողջ պրոցեսը և աշխատողների մեծ ցանկությունը մասնակցել երկրի ներսում ծավալվող գործընթացներին, որոշում է կայացվել օգտվել Հայաստանի Հանրապետության հավաքների ազատության մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հնարավորությունից, մասնակցել խաղաղ անհնազանդության ակցիաներին:

Ընկերությունը կից ներկայացրել է «Էն գրուպ» ՍՊԸ-ի աշխատողների բնակության վայրից տեղեկանքների պատճեները, ք. Երևան Քաջազնունի 1 հասցեում Ընկերության վարձակալած տարածքի պայմանագրի պատճենը, Ընկերության աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը և այլ փաստաթղթեր:

«Էն գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/52 ընթացակարգի շրջանակներում 14.05.2018թ. ժամը 11:05-ին և 16.05.2018թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 16.05.2018թ. ժամը 10:05-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումները:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) 08.05.2018թ. թիվ 1/18-2/23315-18 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն քարթրիջների ձեռքբերման նպատակով 12.04.2018թ. Armeps համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով կազմակերպել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցել է «Էն գրուպ» ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով զբաղեցրել է առաջին տեղ:

«ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. թիվ 2 որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն ներկայացվել վերոհիշյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/52 ընթացակարգի շրջանակներում 14.05.2018թ. ժամը 11:05-ին և 16.05.2018թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Էն գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով, որին Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 20.04.2018թ. ծանուցվել է հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.05.2018թ. թիվ 03/26-3/8418-18 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 08.05.2018թ. թիվ 1/18-2/23315-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էն Գրուպ» ՍՊԸ-ն: Ընկերության հայտը հաստատվել է Ընկերության տնօրեն Աղասի Խառատյանի էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով, որին Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 20.04.2018թ. ծանուցվել է

հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2018/52 ընթացակարգի քննության շրջանակներում հայտնել է, որ քննարկվող ժամանակահատվածում երկրում տիրող իրավիճակի պատճառով Ընկերության աշխատողները, այդ թվում՝ տնօրենը, օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել հասնել աշխատանքի վայր և ուղարկել «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ընկերությունից պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Հայաստանի Կույրերի Միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության (Վարձատու) և «Էն գրուպ» ՍՊԸ-ի (Վարձակալ) միջև 06.05.2017թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը, համաձայն որի Վարձատուն ընդհանուր օգտագործման իրավունքով Վարձակալին է տրամադրել ք. Երևան, Քաջազնունի 1 հասցեում գտնվող տարածքը, որը տվյալ պահին հանդիսանում է «Էն գրուպ» ՍՊԸ-ի գործունեության հասցեն:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ապացույցներ այն մասին, որ Ընկերությունն ունի չորս աշխատող, որոնք բնակվում են Երևան քաղաքից դուրս:

Մասնավորապես՝ Արմավիր քաղաքի թիվ 8 թաղային լիազորի կողմից 17.05.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության տնօրեն Աղասի Աշոտի Խառատյանը (28.07.2015թ. թիվ 1 աշխատանքային պայմանագիր) բնակվում է Արմավիր քաղաքի, Մանուշյան փ., տուն 20 հասցեում:

ՀՀ Կոտայքի մարզի համայնքապետարանի կողմից 17.05.2018թ. տրված թիվ 652 տեղեկանքի համաձայն՝ Անի Խորենի Սարգսյանը (02.10.2017թ. թիվ 5 աշխատանքային պայմանագիր, «Էն գրուպ» ՍՊԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների գլխավոր

մասնագետ) մշտական հաշվառմամբ բնակվում է Եղվարդ քաղաքի, Ղազարյան փող., 1 նրբանցք, տուն 7 հասցեում:

«Հոկտեմբեր-9» բնակ. շին. կոոպերատիվի կողմից 16.05.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Գոհար Ալիկի Գինոսյանը (01.03.2017թ. թիվ 4 աշխատանքային պայմանագիր, «Էն գրուպ» ՍՊԸ-ի շուկայի զարգացման պատասխանատու) բնակվում է Արմավիր քաղաքի, Բաղրամյան փողոցի 10 շենքի, թիվ 30 բնակարանում:

ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի ղեկավարի կողմից 17.05.2018թ. տրված թիվ 01-78 տեղեկանքի համաձայն՝ Ռոման Սաֆարյանը (01.02.2016թ. թիվ 3 աշխատանքային պայմանագիր, քարթրիջի սպասարկման մասնագետ) բնակվում է Արմավիր մարզի Խանջյան գյուղում:

Այսպիսով՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Էն գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընկերությանը վերոհիշյալ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է 20.04.2018թ.: Ընկերությունը, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված եռօրյա ժամկետում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Ուսումնասիրելով «Էն գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև դիրքորոշումը հիմնավորող ապացույցները, գտնում եմ, որ «Էն գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը պայմանավորված է եղել Ընկերության կամքից անկախ օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես, «Էն գրուպ» ՍՊԸ-ի գործունեության հասցեն գտնվում է Երևան քաղաքում, իսկ Ընկերության չորս աշխատողները, այդ թվում նաև՝ Ընկերության տնօրենը, ում կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրվել է հայտը, բնակվում են հարևան՝ Արմավիր և Կոտայքի

մարզերում: Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել խաղաղ անհնազանդություններ, որոնց շրջանակներում արգելափակված են եղել մի շարք ճանապարհներ, այդ թվում նաև՝ Երևան քաղաքից Արմավիր և Կոտայքի մարզ տանող ճանապարհը, որի հետևանքով Ընկերության աշխատակիցները հնարավորություն չեն ունեցել սահմանված ժամկետներում հասնել աշխատավայր: Ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև «Էն գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերության կողմից «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-04-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը պայմանավորված է եղել օբյեկտիվ Ընկերության կամքից անկախ պատճառներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2018թ. թիվ 03/26-3/8418-18 գրությամբ «Էն գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04424087) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**